

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «


ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
2 րիւ մեկ ծրու ուղ)
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.
Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տողը
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journa

„Ipravounk“

V A R N A (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ
չին տրուիր

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆՑՈՒԴՄԱՐԶԲ

Մեծ պետութիւնները Հայկա-
կան և Մակեդոնական խնդիրները
իրենց ձեռքին մէջ իբր խարազան
Սուլթանին դէմ շառաչեցնելով,
կրկին յաջողեցան զայն սարսափե-
ցնել ու իրենց շահուն գործածել:
Սուլթանը փրանսական պահանջ-
ները գոհացնելու միջոցին հար-
կադրուեցաւ Աւստրիոյ դեսպան
Մ. Քալիշին պահանջումներուն ալ
համակերպել:

Կարծէ իշել հոս այդ պահանջ-
ներէ մէկ քանին որոնք Սուլթա-
նի իրաւունքներով վերջին շարժում
գոհացում գտան:

1. Բրեզէրէնի աւստրիական
հիւպատոսին դէմ յարձակում գոր-
ծող սպանի և զինուորները խստիւ
պատժել:

2. Իւսթիւպի մէջ աւստրիական
թարգմանը անպատուող Մէհմետ
բաշան պաշտօնանկ ընել:

3. Աւստրիական հպատակ Տա-
վիտովիչի մեծկակ գումար մը վը-
ճարել իբր հատուցում:

4. Ալպանիոյ մէջ երկու կաթո-
լիկ եկեղեցի և իւսթիւպի մէջ
վարժարան մը շինելու արտօնու-
թիւններ:

5. Թիւրքիոյ մէջ լուծքի հա-
մար ոչ ոքի մենաշնորհ չտալ, ա-
ռանց Աւստրիոյ հաճութիւնը կան-
խաւ ստանալու:

6. Աւստրիացի երեք պահան-
ջատէրներու խիստ մեծ գումար
մը վճարելով գոհացում տալ ա-
նոնց ու դեսպանին:

7. Արեւելիս երկաթուղիի ըն-
կերութեան և թուրք կառավարու-
թեան միջեւ «նկախ» միացած վե-
ճերը անյապաղ կարգադրելու հա-
մար իրաւարար ատեան մը կազ-
մել:

8. Հալէպի մէջ Աւստրիացիի մը
հողային խնդիրը յօգուտ Ա-
ւստրիոյ կարգադրել:

9. Իւ վերջապէս, Հայկական
կոտորածներու ատեն ֆրանսուղ
աւստրիական հպատակներուն իբր
հատուցում 90000 ֆր. վճարել:

Ասոնցմէ զատ ուրիշ մէկ քանի
կէտերու ալ, միշտ ինպատու Ա-
ւստրիոյ և ի վրաս թուրքիոյ,
գոհացում տրուեցաւ և զատ զատ
իրաւունքներով, անոնց գործադրու-
թիւնը հրամայուեցաւ:

Օտար պետութեանց տրուած
այդ գոհացումներով Սուլթանը
իրմէ բան մը չը կորսնցուց ան-
շուշտ, կորսնցնողը կրկին թուր-
քիոյ ժողովուրդն է, քանի որ պե-
տական գանձարանէն կը վճար-
ուին այդ խոշոր գումարները:
Գորս քրիստոնեայ հպատակաց կա-
նակի վերաբերուն ծախելով կը հա-
ւաքէ կառավարութիւնը, Հետեւա-
բար կրնանք ըսել թէ պետու-
թիւնները մեր ու Մակեդոնացուց
խնդիրները Սուլթանը ահաբեկե-
լու միջոց ընտրելով, անոր մի-
ջոցաւ իրենք մեզ կը կողոպտեն:

Հօրէնտոյի վճարուած հարկեր
հազարաւոր ոսկիներու մէկ կարե-
ւոր մասը Հայոց քսակէն ելաւ ը-
սել շատ ճիշդ է: Ուստի Մ. Տէլ-
քասէ հանդէպ Սուլթանի բռնած
քաջարի ընթացքովը մեզ միայն
փնաս հասուցած պիտի ըլլայ, ե-
թէ ինպատու Հայկական խնդրոյն
պետութեանց միջեւ համաձայնու-
թիւն մը գոյալեցնելու նախաձեռ-
նութիւնը չունենայ, ինչպէս որ իր
խոստումները մեզ յուսադրեցին:

Քանի մը օրէ ի վեր Յունաց
մայրաքաղաքը ալեկոծեալ ծովու-
մը երեւոյթը առած է: Առածի
կարգ անցած յունական ֆոնաթի-
կութիւնը կրկին բորբոքած է
այս անգամ կուր օտար աղգե-
րու դէմ չէ, այլ Յոյնը Յոյնի
դէմ:

Կուրն շարժումները Աւետա-
րանը հին յունարենէ նոր յունա-
րէնի թարգմանելու առաջարկն է,
զոր ներկայացուցին «Աղի» և
«Աքրօքսիս» թերթերը, ու մէկ
քանի եկեղեցականներ:

Այս առաջարկին դէմ առաջին
աղմուկը հանեցին Աթէնքի հա-
մալարանի ուսանողները, Տիե-
զերահաչակ հին փիլիսոփաներու
այդ շառաւիղները փոխանակ խն-
դիրը իմաստասիրական ձեւի տակ
քննելու ու ժամոյ միջոցաւ պայ-

քարելու, հիւսժ են քայիգարիա-
կան բիրտ ուժ գործածելու աշ-
խարհաբարեան երկու թերթերու
դէմ, որոնց առաջարկին միակ
նպատակը ըլլալ կը կարծենք, յու
նական կրօնամոլութիւնը և աւե-
լորդապաշտութիւնները, մեղմելու
համար, աւստրիական ժողովուրդը բուն
աւետարանական պատուէրներուն
դիւրահաղորդ ընել, անոր իր հաս-
կացած աշխարհաբար լեզուովը
թարգմանել տալով Ս. Գիրքը:
Մինչդեռ այսօր Յունաց մէջ Ա-
ւետարանը միայն խրթին յունա-
րէն ըլլալով, «խրթին խոնոս իմէ
էջ» ըսող յոյներէն 90 0/00 լու-
րորդին անտեղեակ քրիստոնէական
ոգույն, միատեղական խաւարա-
մտութեան մէջ կ'տապալկի խղճալի-
օրէն, Կերեւայ ոչ դարեւրու հոլո-
վումը և ոչ գիտութեան յոյսը չը
պիտի զօրեն յունական եկեղեցւոյ
մեղմել:

Ուսանողներէ սկսեալ աղմու-
կը ժողովուրդի կողմէ ալ արձա-
գանք գտնելով, այսօր Աթէնքի
փողոցները ֆրանսական լեզուա-
խոսներու ատենուան Բարիզի
պատկերը կը ներկայացունեն:
Բազմաթիւ մեռելներ ու վիրա-
ւորներ զինուոր-ստիկաններէն և
ուսանողներէն: Ուսանողք զին-
ուած ամբացած են համալսարա-
նին մէջ, տանեակ հազարաւոր
ներէ կազմուած ժողովրդական
խումբեր հոս հոն կը խուժեն,
կընդհարին զօրքերուն, կը ցը-
րուին, և ումիշ տեղ մը կրկին կը
հաւաքուին:

Մտքերը հանդարտեցնելու հա-
մար Սինօդը վերջին անգամ որո-
շեց որ Աւետարանը բնաւ աշխա-
հաբար չի թարգմանուի, Աթէն-
քի մեծ մէթրօքլիտը և ոստիկա-
նապետը հրաժարեցան. բայց ժո-
ղովուրդը չի հանդարտիր: Զօ-
րավար Վասսիլ պաշտօն տրուե-
ցաւ զօրաց հրամանատարութիւնը
ստանձնելով, խռովութիւնը հան-
դարտեցնել:

Կը վարացուի թէ խնդրոյն գոյ-
նը փոխուի և արքայական գահին
դէմ ապստամբական կերպարանք
առնէ. որովհետեւ կառավարու-
թեան հակառակ կուսակցութիւն:

ները մտքերու այս բորբոքած վի-
ճակէն օգտուելու զգուշ, ժողովուր-
դը կը սրբաբն հրապարակախո-
սութիւններով ու հրատարակու-
թիւններով: Վերջապէս այսօր
Յունաստանէ անակնկալներ կըս-
պասուին:

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ԳՐԻ. ՆԱՍԱԿ

... Խմբագրութիւն Իրաւաբ թերթի
կը խնդրեմ ձեզմէ, ինչպէս որ ըրած
եմ Զայն Հայրենեաց եւ Հայրենիք շա-
րաթաթերթերէն ալ, որ տեղ մը չը-
նորէք ինձ պատմելու համար երկու
կուսակցութեանց հետ ունեցած բա-
նակցութիւններս միութեան մասին:
Իբր յառաջաբան բացատրութիւն
մը պարտիմ:

Պէտք է յայտնեմ թէ ինչպէս եղաւ
որ համարձակութիւն ունեցայ ինք-
նաբեր միջնորդ մը ըլլալու իրենց մի-
ջեւ: Արդեօք ունէի մէկ քանին այն
անձնական հանգամանքներէն որ հը-
նարաւոր եւ կարելի կրնային ընել
բարեխօս միջնորդի դերս: Մէկ խօս-
քով երկուքին ալ վստահելի էի ար-
դեօք:

Այս հարցմանս իբր պատասխան,
զիտէի թէ երկու կուսակցութիւննե-
րէն մին զիս նկատած էր ժամանակով
իրեն թշնամի մը. իսկ միւսը լա-
ւազոյն կարծիք մ'ունէր իմ մասին
արդեօք: Այս երկբայութիւններս պի-
տի զիս ետ կեցնէին միջամտել, ե-
թէ ստացած չը լինէի հետզհետէ հե-
տեւեալ նամակները:

21 Հոկտ. 1898

«... Զեր վայելած մեծ համբա-
ւը, որուն իրաւամբ այսքան արժա-
նի էք, մեծ հաւատք ներշնչեց ժո-
ղովին իբր թարգման ամբողջ կու-
սակցութեան, որ պիտի կարենաք
Հայ ազգին այս ծանր ճգնաժամին
նշանաւոր ծառայութիւններ մատու-
ցանել ազգային փրկութեան Դա-
տին, իբր ղեկավարիչ մը հնչակեան
կուսակցութեան...»

Կեզր. Վարչութիւն
ՂԵՒՈՆԴ... Կ. Յ. ՓԱՓԱԶԱՆ

«... Շատերը գիտեն թէ մէկզի
գնելով ձեր հին գործունէութիւնը,
ու միայն վերջի տարիներուն մէջ
զուք անձնական ինչ մեծ գոհողու-
թիւններու յանձնառու եղաք Ազգին
մտաւորական առաջնորդ մը հանդի-
սանալու համար: Զեր դրամը,

ձեր բարեկեցութիւնը, ձեր հանգիստը զոհեցիք ընդհանուրին համար...

ԼԵՒՈՆ ՄԻՐՏԻՉԵԱՆ

Լոնտոն, 4 դեկտ. 99

«... Կ'ընդունիմ մեր կուսակցութեան մէջ Ատենապետի, այսինքն շեֆ-ի պաշտօնը ստանձնելը, թերթերու խմբագրութեամբ: Այս պարագային ես բոլորովին կ'ընտրուիմ...»

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

Աղեքս. 25 դեկտ. 99

«... Եթէ Պ. Արփարը յաջողի Ձեզ համոզել որ ատանկ պաշտօն մը՝ ըստանձնէք, մենք ամենքս ալ շատ ուրախ կըլլանք ու Պ. Արփար ալ կուսակցութեան երախտագրութեան կ'արժանանայ...»

ԼԵՒՈՆ ՄԻՐՏԻՉԵԱՆ

Ահա ասիկ յեղափոխական քնարի մը է՛ն անուշ ձայները: Ո՛ր եւ է մարդու մը զգուար պիտի ըլլար երեւակայնէր հրաւէր մը, առաջարկ մը, որ ասկէ աւելի պատուաբեր եւ հրապուրիչ ըլլար:

Ես մերժեցի: Բայց ամեն ոք կարգաւոր ալ իմանալով որ պիտի տարբերակէր այն համարժեցող միջնորդ մը ներկայացուցէր հնչականներուն, ինքնաբերաբար, միութեան համար:

Եթէ երկուք մ'ունէի, այն ալ դաշնակցականներէն էր: Աստուծոյ պիտի ըլլան, կըսէի ինքնիրենս, այն անգործելի ժամը, քարի նման խօսք չի հասկցող այն կուսակցութիւնը, որուն վրայ պիտի չի կրնամ ազդել ոչ մի կերպով: Ինչ չպիտի վստահին ուրովհետեւ յարգանք մը չունին իմ անձիս:

Բարեկամ մը, որուն հաղորդեցի այս երկիւղներս, յակձնադու եղաւ թոյլիւ իր ժրնէն, դաշնակցականներուն տրամադրութիւնները հասկընալու համար, եւ ինչ անկէ գրեց:

Ժրնէն, 9 յունւար 900

«... Տեսնուեցայ... Ի հետ: Միացումի գործին կարեւորութիւնը:

բարձրութիւնը եւ անհամեմատելի օգտակարութիւնը իրենք միշտ կը խոստովանին, ու թէպէտեւ այս պահուստ լարուած կը տեսնեն երկու կողմի յարաբերութիւնները, այսուհանդերձ կը հաւանին ձեզի հետ բանակցել:

«Ինչ հարցուցին թէ կարելի՞ է ձեզ հոս հրաւիրել: Եկատելով որ վերաւորինչ բան մը չկայ ձեզի համար հոս գալով, եւ միւս կողմէ, իրենք հասկցան որ միութեան նորոգ գաղափարը ձեզմէ եւ ինչմէ կը ներկայանայ իրենց եւ ոչ թէ հնչականներէն, հետեւաբար, ամեն պարագայի չմէջ, ապագայի տեսակէտէ ալ շնորհիւ մը չը կայ, ձեր ծոս գալովը այս կամ այն կուսակցութեան, ես խոստացայ ձեր կողմէն...»

Դաշնակցականներուն գէժ կասկածոտութիւնս սկսաւ քիչ մը նւազիլ այս համակերպումով:

Այդ միջոցին Իսախան էի, եւ Պրն Արփարէն խնդրած էի որ Լոնտոնէն ելլելով ինչի գայ: Միտքս էր նախ իմին հնչականներուն հետ կարծիքներու փոխանակութիւն մ'ունենալ: Պրն. Արփար չհկաւ եւ ինչ գրեց:

«... Կացութեանս այս ըլլալով, կ'զգաս թէ որքան կ'ընտրուի տեղս անշարժ մնալու հարկադրուած ըլլալուս:»

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ

Այս հանգամանքներուն մէջ, ինչ կը մնար թէ մէկին եւ թէ միւսին ոտքը երթալ, — ինչ որ ըրի նախ ժրնէն եւ յետոյ Բարիդ ու Լոնտոն մեկնելով, ուր օրեր եւ շաբաթներ անցուցի միութեան հարցին վրայ վիճարկելով:

Մեծ մտահոգութիւնս եղած էր թէ ինչ լեզու պէտք էր որ պարզածէի իրաքանչիւրին հետ: Հա՛րկ էր, զիրենք գրաւելու եւ սրբաշնորհու համար, զրուստեւ եւ ներքողել, ըստ Արեւելեան գրութեան: Հա՛րկ էր, ընդհակառակը, չվարագրուիլ իրենցմէ եւ ոչ մէկ պակասութիւններ: Մէկ խօսքով, պէ՛տք էր որ աչք գոցէի իւրաքանչիւրին իսկական վիճակին վրայ:

Այդպէս վարուելով, պիտի ստանալայի, եւ սաւառ հիմ ընելով միութեան պիտի չինէի խախտու չէնք մը, աւազի վրայ: Այս խորհրդածութեամբ, որոշեցի խօսիլ ամեն մէկին ոչ թէ իր անսղիւստ, այլ քննադատելի կողմերուն վրայ, խորշնելով միւս կուսակցութիւնը իր առջին պատկերացմէն: Ետեւան վերջապէս մէկ բան էր, այն էր որ իւրաքանչիւրը անկեղծօրէն անդրադառնար իր թերութեանց վրայ:

Քննադատը չի սիրուիր, այս է յայտնի, եւ բարեկամս որ գիտէր նպատակս, ինչ կը գրէր:

«... Ժրնէնէն եկան... Ի հետ երկար տեսնուեցայ: Ստիպուեցայ ձեր ընթացքը բացատրել, թիւրիմացութիւնները շնչելու համար, թէ որքան խիստ գտնուած էք իրենց ներկայութեամբ, նոյնքան եւ աւելի հնչականներու հանդէպ...»

Կարեւորագոյն խնդիր մըն ալ այն էր թէ ո՞ր տեսակէտէ նայելով պէտք էր որ միութեան պայմանները գծէի: Արդեօք կուսակցութիւնները հաշտեցնելու տեսակէտէն միայն: Որովհետեւ երկուքը կրնային հաշտուիլ եւ իրար ազդեցիկ իրար գիրացնելու իսկ տկարացնել, եւ կամ առանց քայլ մը ընել տալու Յեղափոխութեան, որ, ալ այսուհետեւ ըլլալու է Ազգային Հաստատութիւն մը, միակը որ պիտի կրնայ Ազգը ազդիլ ինքզինքը ու բանալէ: Ինքզինքը մոռնալէ:

Այս հարցերուն մտադիր ըլլալով է որ նշանակեցի այն ինչ պայմանները որոնք հիմա ծանօթ են ամենուն:

Ո՞ր լուրջ հայր կրնար մտքէն անյլնել որ "Արփարի խնդիր" ըսուած վէճը ճամբուս վրայ խաչնդոտ մը պիտի հանուէր հնչականներուն կողմէ: Խնդր մը հորը քար մը նետեց, կըսէր նախնադուր Հոգան, քառուս իմաստուն շուրջը ընդհանրելով չի կըցան հանել, ճիշդ այս էր: Դաշնակցականներուն գնդակով իսկ վերջիվերջոյ պատահաստեւած թրքահայ մը կը շինէ կեղծ թղթեր, ու կ'ամբաստանէ Պ. Արփարը իրեն մատնիլ, կը յաջողի խաբել աս ու ան, կ'ստեղծէ անոր գէժ տեսակ մը հանրային կարծիք — սխալ — որմէ կը պաշարուին շատ մը

ուղղամիտ եւ անյիւ թրքահայեր եւ ուսանայի, ճիշդ ինչպէս Տրէյֆիւսի պարագային մէջ խաբուեցան շատ պատուաւոր ֆրանսացիներ, եւ կ'ունենանք այսպէս խնդիր մը որ ուրեւանի պէս առջեւս եկաւ տնկուեցաւ, ամեն մէկ քայլիս:

Ինչ թող ներուի հոս առաջ բերել ժրնէնցիներուն հետ ըրած բանակցութիւնս օրաբեցն սա մտաւ:

«... Պ. յայտարարեց որ պիտի շարունակեն Յաւելածին մնացորդ մասը հրատարակել, առանց ընդհատելու, առանց յետաձգելու: Ես զինազուլ առաջարկեցի: Ինքուեցաւ: Դիտել տուի թէ սխալ մըն է որ կը գործեն, յարձակու միջոցը չտրուաւ: Կեղծ նոյն այն թողեցի, որ եւ հաշտեցնելու կ'աշխատիմ: Զիջում մ'ըլրին:

Նիստէն մեկնեցայ այն կարծիքով որ այլ եւս կարիք չէ բանակցել: Բայց հետեւեալ օրը, ըրի սա յայտարարութիւնս: Ես ձեզ թոյլ կուտամ շարունակել ձեր յարձակումները Յաւելածով, բայց միայն այն պայմանաւ որ Պ. Արփարին իրաւունքը ճանչնալ իր խնդիրը հանելու: Միացեալին առժամային դատարանին օգուլ, որուն կազմուիլը իր պայման կ'առաջարկեմ ահա: Պատասխանեցին թէ աղբիւր դատարանը եղած լինցած է այդ հարցի վրայ: Պրն. կ'օրհանէր կողմէ...»

Միխայիլ

(Շարունակելի)

ԳԵՂՈՒՆԻ

Բազմալեզու իմքադրութեան այս նոր թերթի անգրանիկ պրակը հրատարակուած է հետեւեալ պարունակութեամբ:

ՅՕԴՈՒՍԾՆԵՐ

ԵՐԵՄ, Հ. Ս. Օգնելու ու Գործենք (խմբագրական):

ՂԱԶԻԿԵՍՆ, Հ. Ս. — Այտայի հրապարակողութիւնը:

ԵՐԵՄ, Հ. Ս. — Կեղեցիկ (նկարագիր տիեզերահռչակ երգապետաց եւ

ԴՐՕՇԱԿ

ԵՒ

ԵՐԱՏԱՍԱՐԴ ԹԻԻՐԲԵՐԸ

(Շար. Աստուր թիւն)

Այս տեղ եւս խնդիրն այն չէ թէ ինչ բան է այդ ֆէյտ ըլլալ տ կազմակերպութիւնը, իբրեւ քաղաքական-պետական սխառութ, եւ թէ արդեօք միայն «ներկայ թիւրք կառավարութիւնը միակ իսկական թշնամին է Դրօշակի եւ Երիտասարդ Թիւրքերի»: Խնդիրն այն է որ Դրօշակի «ցանած սերմերը ծաղկում, ծլում են եւ վաղը պատու պիտի տան»: Խնդիրն այն է որ Դրօշակը կոչ է ուղղում Երիտասարդ Թիւրքերին գործել «մի գրօշի տակ»: Ո՛րտեղ, ինչպէս եւ ինչ ուղղութեամբ — դրանք միշտ հարցեր են անկասկած: Միւս կողմից Երիտասարդ Թիւրքերն արդեօք նոյնպէս «ֆէյտայիստ են»:

Ուրի տիրա յետոյ (թիւ 2 Փետրւար 1899) Դրօշակը 1898-1899-ի «Տեսութեան» մէջ գիտում է «Միայն հայերը չեն, որ նեղում են Սուլթանի կառավարութիւնը: Անցեալ տարւոյ սկզբին Դրօշակի մէջ տպւեց Երիտասարդ Թիւրքերի մի գիտում վեց պետութիւններին, ուր առաւել է նաեւ թէ կ'օրհանէր վճռել է մեկ խիստ արշաւանք եւ կատաղի կռիւ: Թէեւ Երիտասարդ Թիւրքերի մա-

սին աննպաստ լուրեր լուեցին, նրանց շանտաժութեան եւ կաշառակերութեան չտեսնուած օրինակներին պատճառով, բայց ինչպիսի ունենալով ներանց յիշած դիմումը, եւ միւս կողմից այն ընդհանուր օրէնքը որ ամեն մի նոր հասարական հոսանք իր գարգանալու եւ ձեւակերպւելու համար պահանջում է ժամանակ, մենք ասում ենք որ այդ դիմումը մի լուրջ սպառնալիք է սուլթանական ընթերցմի դէմ: «Թիւրք ժողովրդի տգիտութիւնը եւ այլ հակաքաղաքակրթ պայմաններ աննպաստ են Երիտասարդ Թիւրքերի գործունէութեան համար», բայց գործի կարիքը զգացող խօսքը կ'օրհանէ իսկական գործը: Թրքական շարժում — ահա վստահաւոր մի վէրք թշնամու վրայ, եւ այդ վէրքը, որը աճում է հիւանդ մարդու սրտի վրայ, ուրիշ կերպ չէ կարող վերջանալ, բայց եթէ սուլթանական ընթերցմի մահով:

Դրօշակի աւելի հեռու գնաց: Երիտասարդ Թիւրքերն այլ եւս գաղապարտելի չեն, որ միայն խօսում են, որովհետեւ գործի պայմաններ չկան, եւ նրանց «գործի կարիքը զգացող խօսքից կ'օրհանէ իսկական գործը»:

Նոյն տարւոյ վերջին Դրօշակը դիմել էր Երիտասարդ Թիւրքերին, նրանից մի օտաւտութիւն խնդրելով իրանց գործերի վերաբերմամբ, եւ 1900 թիւ Յունուար, թիւ 1-ի մէջ տպւեց այդ տեսութիւնը «Բարեկամներ» վերնագրով եւ «Երիտասարդ Թիւրք մը» ստորագրութեամբ: Այդ տեսութեան հեղինակը հաշիւ է տալիս որ «այսօրուս օրս միայն Պոսթի 2,900 երիտասարդ Թիւրքեր են աքսորւած եւ 450 էլ բանտարկւած», ասում է թէ իրանց

կուսակցութիւնը կ'պարունակի իր մէջ «ականաւոր անձինք»: Երիտասարդ Թիւրքերի մէջ երկու հոսանք կայ — յեղափոխական (Օսմանյի) եւ «քաշքաշական», երեւի բարենորոգչական (Մէշլէրէթ): Երիտասարդ Թիւրքերն յեղափոխականներու միութեան ցանկացող է:

Ներկայ տարւոյ Դրօշակի Յուլիս, թիւ 5-ի մէջ տպւեց գարձեալ մի կտոր «օսմանեան անկատար կեղծականներ ըմբռնելու» յայտարարութիւնից, իսկ դեռ սրանից միայն մէկ ամիս առաջ Դրօշակը գետնեց տալիս Մահմուտ վաշայի «Բաց նամակ հայերուն» յօդւածը, որի հեղինակը կոչ էր ուղղում հայերին միանալ Թիւրքերի հետ վերջ տալու համար օսմանեան կայսրութեան:

Գործերն այս վիճակի մէջ էին եւ «Դրօշակի» դիրքը զէպի Երիտասարդ Թիւրքերը, Վիսնադամայն բարեկամական էր: Սալայն ներկայ տարւոյ Հոկտեմբեր թիւ 8-ի մէջ Դրօշակը գետնեցիլ է մի առաջնորդող «Միութեան Թիւրքերի հետ» վերնագրով, որի մէջ Դրօշակը «հայ յեղափոխական գաղափարներու անուանից միայն խօսելու իրաւունքով», միանգամայն հակառակ դիրք է ընդունում Երիտասարդ Թիւրքերի վերաբերմամբ: Թողածն ասում է, «կար մի ժամանակ, որ մենք ինք առաջարկուի Երիտասարդ Թիւրքերին միանալ, իսկ այժմ գերբեր փոխել են, եւ մերք անվճարական դիրքի մէջ են: Մենք չենք կարող միանալ Երիտասարդ Թիւրքերի հետ, որովհետեւ նախ, միջնորդ մենք գործում ենք նրանք խօսում են միայն, եւ այն էլ ոչ թէ ներքին կաշկանդից գործունէրը քննադատելով, այլ յարձակելով միայն Սուլթան

Վենետիկյան ներկայ գեղարուեստի ցուցահանդէսին, եւն)։

Թրքահայ դէմքեր (Պ. Օտեան. Ս. Մայրապետ Գալֆայեան, Տօք. Բէշտալճեան)։

Էփրիկեան Հ. Ս. — Դավրէժ (տեղեկագրական նկարագիր)։

ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Իտալ. երաժշտական փառքերու Ռոսսինիի, Պելլիի, Տոնիճէթիի եւ Վերտիի խմբակար։

2. Ապաստան մեղաւորաց (Վէնէտ, կոյ ցուցահանդէսին սրտաշարժ պատկեր)։

3. Դարձ ձկնորսութենէ (շուրս գործոց Տանիմարքացի Անքեր Միքայէլ նկարչի. դարձ վենետիկեան ցուցահանդէսին)։

4. (Այս տարուան մէջ վախճանեալ

5.) երկու հաշակաւոր իտալ. նկարիչներու գլուխ գործոցներուն գեղեցիկ պատկերներ։

6. Պ. Օտեան։

7. Ս. Մայրապետ Գալֆայեան։

8. Տ. Փէշտալճեան։

9. Դավրէժի թամարեան մանկապարտէզի աշակերտաց խմբակար։

10. Դավրէժի Բերդաթաղի տեսարան։

11. Դավրէժ քաղաքի ընդհանուր տեսարան։

12. Դավրէժի Հայ Օրիորդաց Թամարեան ուսումնարանը։

ԿՈՂՔԸ

Կողքը արտաքսապէս զարգարուած է գրքերու ծանուցումներով։ Կ'ըզուսուին յարտարարութիւններ. Դերաքանիւր տող կարծէ 50 սանդիւմ։

Կողքը ներքին երկու երեսներու վրայ կը պարունակէ ժամանակակից ազգային նոր եւ կարեւոր տեղեկութիւններ, քաղուած հայ լրագիրներէ։ Բաց աստի բազմաթիւ նոր գիւտերու վրայ տեղեկութիւններ, Ամենին ի միասին հրատարակուած են մանրատառ ութ երկաթի սիւնակներու մէջ։

Գին՝ 10 Լ. կը հրատարակուի երկու ամիս մի անգամ։

Տարեկան բաժնեկիւնն է 3 Ֆր. 1 րբ. 50 կոպեկ։

Թերթէ գոյացած մաքուր հասոյթին կէսը առանց կրօնքի խտրու-

թեան, կը յատկացնենք ազգիս Որբիկներուն։

Ապառիկ Բաժանորդագրութիւն Բաշարձակապէս Զընդունուի։ Գինը կանխիկ է։

Բաժնեկիւն, նամակ եւ այլն Ուղղակի հետեւեալ հասցէին յղելու է։

«Բազմալեզ»

Ս. Ղալար. Վենետիկ (Խոտալիս)

Ռուսաստանի եւ Ամերիկայի ազգային Գիշտական գիւրաւ ստանալու համար կարող են գինիլ հետեւեալ մեր գործակալաց

Ռուսաստան—Մ. Գալուս Գալուս—Եւսե

Ամերիկա—Միւք. Հայրենիքի Պոստի

ԱԶԳԱՅԻՆ ՄԱՍԻՆՆԵԱՆ

Ողբերգութիւն 3 արտ եւ ծիծաղաշարժ զաւեշտ մը

Պիտի ներկայացուի Վէսէյո Խուս. քին կողմանէ, վաղը իրիկուն, հինգշաբթի նոյիս. 15, Սանքրալ սրահին մէջ։

Ազգային նուիրական յիշատակներ զարթուցանող այս թատերական երեկոյթը անշուշտ ամեն հայու համար հաճելի է. եւ կը յուսանք թէ ժողովուրդը հո՞ծ բազմութեամբ մը կը քաջալերէ խումբը, որպէսզի սա կարենայ ուրիշ անգամներ ազգային ներկայացումներով ժողովուրդին հայրենասիրական եռանդը վառել, եւ մեր նախնիքներուն բարբարոս դարերու մէջ, ազգին եւ հայրենիքին պահպանումին համար, ցոյց տուած գեղացոյցական քաջագործութիւնները կենդանի գոյներով պարզել։

ՇՆՈՐՀԱՅԱԼԻՔ

Հոգաբարձութիւնս կը փութայ հրապարակաւ ի դիմաց քաղքիս հայ մանկաւոյն, իր ամենամեծ շնորհակալքի յայտնել, ի Մանկագոր, ազնուաշուք Սարգիս աղա Գուլումճեանի, որ իր հանրածանօթ բարե-

սիրութեամբ հաճեցաւ Տիար Վաղարշակ Գուլումճեանի ձեռամբ նուիրել Ս. Հոգաբարձութեան եւ Ս. Մեսրոպեան վարժարանաց եւ մանկապարտէզիս ձմարան ամբողջ վառելափայտ եւ ամուսնի։

Ի դիմաց հոգաբարձութեան Վ. Աստուղապիւրի Վ. Աստուղապի Ս. Պիտիւնի Գ. Յ. Աստուղապի Ռուստուք 10 նոյեմբեր

ՍՏՈՐ ՄԱՍՆՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

«Իրաւունք»-ի 24 հոկտեմբ. թիւին մէջ «Ստոր մատնութիւն մը» խորագրով եւ Վ. Մաղմանեան ստորագրութեամբ յօդուածի մը վերջին մասին մէջ զարմանքով կարդացի հետեւեալ տողերը։

«Ներքինը կը յուսամ որ առաջին առթիւ կը հրատարակէք։ Բնաւ չի տարակուսիք ճշմարտութեանը մասին։ Բարիքէն վկաներ Օտեան, Մեծատուրեան, Եղբայրս, Մարգուանցի Յակոբ եւ ուրիշներ, որոնց Շահրիման խոստովանած է, ըսելով որ Լեւոնը ըրած է, հարկաւ պիտի աշխատի որ ինքզինքը արդարացնէ... եւն։»

Արդ, թէեւ մականունին քով անուն չի կայ, այսուհանդերձ կարծեմ չեմ սխալիւր ենթադրելով որ յօդուածագիրը Օտեան ըսելով ինքի անհրաժեշտութեան համար պարտք կը զգամ անմիջապէս ձեր թերթին դիմելու. որպէսզի հաճիք, յանուն ճշմարտութեան, յայտարարել որ երբէք ալ չեմ նամակի խնդրին առթիւ Պ. Վ. Շահրիման, Բարիք գտնուած կարճատեւ միջոցին, ո'չ առանձնապէս, ո'չ ալ այդ յիշուած անձերու կամ ուրիշներու քով, որ եւ է խօսք կամ խոստովանութիւն չէ ըրած ինձ, հետեւաբար բոլորովին երեւակայական է իմ վկայութիւնս այդ խնդրին մէջ։

Առաջին անգամ այդ նամակի խնդիրը իմացայ Պ. Վ. Շահրիմանի վերջերս հրապարակ հանած պատասխանագրէն ու անկէ ետքը «Իրաւունք»-ի ու «Շարժում»-ի դրածներէն։

Վստահ ըլլալով որ խմբագրութիւնը Կիտի բարեհաճի անկիւն մը չնորհել, իր թերթին մէջ այս երկատողիս։

Մնամ խորին յարգանքք Նրուանդ Օսեան

Մանօք. իւր. — Բարիքէ Պ. Բազարատ նամակաւ մը խմբագրութեան կ'իմացնէ թէ Վ. Շահրիման այդ խոստովանութիւնը միայն իր ներկայութեան ըրած է, երբ ինք եւ Շահրիման յիշեալ անձնաւորութեանց հետ տեսակցութիւն մը ունենալէ յետոյ առանձնացած են։ Հետեւաբար Մանօն անհնարեալ նամակին գործը Լեւոն Սարգիսեանը ըրած ըլլալը միայն Պ. Բազարատի ներկայութեանը խօսած է Շահրիման։ Բայց արդէն այս վերջինը իր ծանօթ հրատարակութեամբն ամեն բան պարզած է, բացի մէկ քանի կէտերէ որոնց մասին հրապարակաւ հարցումներ ուղղած ենք իրեն։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիւրիկիոյ կաթողիկոսական ընտ. լուծեան ցուցակը նախարարաց խորհրդոյ կողմէ կիրաւի օր ճշկատողութեան պիտի առնուէր ու Պատրիարքարանի յանձնուէր։ Խառն ժողովը մտադիր էր խնդրել Օրմանեանէ որ ընտրելութիւնէ հրաժարի. բայց ինչպէս կերեւայ Օրմանեան կը դժկամակի հըրաժարելու, յոյս ունենալով որ ինքը կաթողիկոս ընտրուի կամ կաթողիկոս-պատրիարք ըլլայ։

— Կարինէն անցեալ երեքշաբթի օր Պատրիարքարան հասած հեռագիր մը ծանուցած է թէ երկրաշարժի ցնցումները վերսկըսած են հոն, եւ կարօտեալները շատ անձուկ վիճակի մէջ կը գտնուին։ Հայ հոգովէականաց պատրիարքարանի ալ կարեւոր պրկածեւոյց ի նպաստ հանգանակութեան

Համախի վրայ, կարծես թէ վերջինիս տնտեսական լուծ, Տաճկաստանը օրինակելի մի երկիր կ'ըստնայ։ Երկրորդ, նրանք արդարացում են հայկական կոտորածները եւ բացասում են հայկական հարցը, իբրեւ միջազգային խնդիր։ Երրորդ նրանք բարոյական եւ վստահելի խմբեր չեն, այլ ապրուստ ճարող կարիքխոսներ։ Զորքորդ, նրանք բարեհաւոր գիւններ են եւ ոչ յեղափոխականներ եւ հինգերորդ, նրանք Միթհատ փաշայի սահմանադրութիւնն են մէջեւ գնում, որ անբեւարար է, եւ ոչ ֆէտէրաթիւ ուսմանական կազմակերպութիւն։ Մինք անկարող ենք միանալ եթիտասարդ թիւերքի հետ, որովհետեւ ձայները այնտեղից չեն լսուում, որտեղից մենք վաղուց ի վեր շարունակ սպասում ենք, եւ լուսմներն էլ դիւթիչ եւ ոյժ տուող ձայներ չեն։ Ինչպէ՞ս ընդունենք այն ձեռքերը որ ուղում են միայն մեր ձայնը խեղդել։

Ինչո՞վ բացարարել Դրօշակի այս տրամադրմանցիւն։ «Տասը տարի առաջ միութեան գաղափարը ընտրել իբրեւ հիմնական կէտ ծրագրի» չորս տարի տեւեալ այդ միութեան, եւ «ձայներ լսել» ու «ձեռքեր ընդունել», եւ այժմ յանկարծ, միանգամայն երես դարձնել Երիտասարդ Թիւրքերից, չը լսել այդ ձայնը, չընդունել այդ ձեռքերը, գէրջի հաւատարեցնել նրանց գոյութիւնն ու գործունէութիւնը, եւ մինչեւ իսկ անբարոյական անւանել նրանց, Ինչո՞ւ Դրօշակը խռովեց Երիտասարդ Թիւր

քերից։ Ինչ մի սոսկալի եւ միանգամայն անսպասելի դէպք պատահեց, որը պատճառ լինէր «միութեան գաղափարը ընտրելիս» եւ տարիների ընթացքում «ձայներ լսելիս եւ ձեռքեր ընդունելիս»։ Այն պատճառները, որ Դրօշակը թուում է իբրեւ արդեւքներ միութեան, միթէ գոյութիւն չ'ունէին սրտնից տարիներ առաջ։

Դրօշակն ասում է. «Ինչպէ՞ս միանալ, երբ Երիտասարդ Թիւրքերը խօսում են միայն, իսկ հայ յեղափոխականները գործում են»։ Զ'ընենք թէ ո'րն է խօսքը եւ ո'րն է գործը, սակայն Երիտասարդ Թիւրքերը այժմ աւելի գործող են. քան թէ առաջ — փաստ, հէնց Դրօշակի այս տարւայ թիւ 1ին մէջ տուած Երիտասարդ Թիւրքերի պաշտօնական տեսութիւնը։

Ինչպէ՞ս Դրօշակը հիմնւած միայն խօսքի վրայ, աւելին եւս, հիմնւած միայն «Օսմանեան Յեղափոխական կուսակցութեան» առաջին եւ անմիտ «չըրջաբերական» ի վրայ. 1897 թիւ Յունւարին գրում էր թէ այդ չըրջաբերականը «իր բացարձակ յեղափոխական ոգեով նոր դարագլուխ է կազմում օսմանեան ազգի համար» թէ «օսմանեան ազգը այսօր ոտ է դրել իսկական յեղափոխական ուղիի վրայ» եւ թէ «տաճիկ յեղափոխութիւնը պիտի լայնանայ» եւ այլն եւ այլն։ Ինչո՞ւ Դրօշակն այդ ժամանակ բաւականացած խօսքով, միութիւն էր քարոզում. ընդունում էր «պարզած ձեռքը», իսկ այժմ դժգոհ

է գործի սկզբնաւորութիւնից եւ միութիւնը յետ է մղում։ Բացի այդ, չէ՞ որ հէնց Դրօշակի «պատմական հասկացողութեամբ «ամեն մի հասարակական հոսանք զարգանալու եւ ձեւակերպելու համար պահանջում է ժամանակ» մի հասկացողութիւն որը նա գործադրեց Երիտասարդ Թիւրքերի վերաբերմամբ, եւ արդարացնելով նրանց կրկին միութիւն քարոզեց։ Դրօշակը տպեց որ Երիտասարդ Թիւրքերն, ընդհանուր գումարով, մինչեւ 4000 զոհ է տւած։ Գիշ բան չէ, առանց ապաստմանական շարժումների այդքան մարդ զոհել։ Իսկ թէ ինչո՞ւ թիւրք ժողովուրդը չէ մասնակցում շարժման, այդ էլ բացատրեց Դրօշակը թէ «Թիւրք ժողովուրդի սոցիալութիւնը եւ այլ հակաքաղաքակիրթ պայմաններ աննպաստ են Երիտասարդ Թիւրքերի գործունէութեան» եւ աւելացրեց թէ սակայն «գործի կարիք դառնող խօսքը կը ժայթքի ի սկսկան զօրքը» եւ թէ այժմ գոյութիւն ունի «թրքական շարժում — մի մահացու վէրք հիւանդ մարդու սրտի վրայ» (Դրօշակ 1899 թիւ 2)։

(Շար.)

Հ. Ա. Ն. Է. Ս

—)(—

պիտի ձեռնարկէ այս օրերս, կար- նոյ մէջ եւս 700 ոսկւոյ չափ հան- գանակութիւն մը կատարուած է:

— Հայաստանի որբերուն նպաս- տող Յանձնաժողովը իր վերջին նիս- տին մէջ կրկին խորհրդակցութիւն ուղեցած է հոս ու հոն գտնուած մանր որբանոցները գոցել և կեդ- րոն գաւառներու մէջ արհեստա- րտն-որբանոցներ հաստատել:

— Մշոյ Ս. Առաքելոց վանքի որբանոցին վիճակը շատ տխուր գոյններով նկարագրուած է տեղւոյն Պատր. Փոխանորդը: Որոշուած է 50 ոսկի շրջել հոն:

— Նպաստող Յանձնաժողովը նը- կատելով թէ վանայ վարագայ որբանոցին տեսուչը Գուրգուրեան զեղծումներ գործած և հակառակ Պատրիարքարանի որոշումներուն, իրեն կուսակիցներ շահած ըլլալով, չի քաշուիր պաշտօնէն, իմացուց ի պաշտօնէ յիշեալ որբանոցի հո- գարարձորթեան թէ յառաջիկայ դեկտեմբեր 1ին նպաստը պիտի դադրեցնէ, և անկէ ետքը իրենք պէտք է հոգան տնտեսական միջոց- ներով այդ որբանոցի պէտքերը, ե- թէ չեն ուզեր փակել: Եանձնա- ժողովը այս կերպով վանեցույտե- ղական կուսակցական կուսներէն իր օճիքը ազատած պիտի ըլլայ:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻԻՐՔԻԱ

Սթանպուլտան ալըման սոն հա- վատխաթա նազարէն, Սատըր ա- զամ քիւչիւք Սալիտ բաշանըն նասպընտան տօլայը վիւքէլատա իթիթիլաֆ հուսուլա կէլմիշ օլուպ, Ատիլիէ նազըրը իսթիֆաւընը վէր միշ տիր: Քէլա տիկէր նազըրլար Սալիտ բաշանըն իտարէսի վէրի- յասէթի ալթընտա մէմուրիյէթէ տէվամ իթմէք իսթէմէտիքլէրինի սէրայա արգ իթմիշ օլտըզլարըն տան, եազընէն հէյլէթը վիւքէ- լատա եէնի պիր թէպէտտիլաթ վուգու պուլաճաղը պէքլէնիլմէք- տէ տիր:

— Սթանպուլտան վէրիլէն պիր թէլէկրաֆա կէօրէ, Պէրուլտա վուգուա կէլէն սոն իթիթիլա սէ- պէպի իլէ՝ Տատէտ ինկիլիկ հարապ սէֆինէլէրի Պէրուլտա կէլմիշ տիր: Խալալարըն եէնի պիր հիւճիւմլէ- րի հալիւտէ՝ խրիթիլալարը մու- հաֆազա իթմէք իլիւն լազըմ կէ- լէն թէտպիրի իթիթիլազ իթմէք մէպունիլէթի ամիրալա վէրիլմիշ օլտըզընը տախի եազըրլար:

— Հրմէնիստան զըրկընլարը սէ- պէպի իլէ, պէօլիւք տէվլէթլէրին իքիշէր հարապ սէֆինէլէրի Սթան- պուլ Էօնիւնտէ պուլընտըրլալա- ընտ մէպունիլէթ վէրիլմիշ օլ- մաղլէ, պու կիւնէ գատար մէզ- քիւր վարօրլար Ղալաթա սուլա- ընտա, էլիլէրին մայէթիւտէ

պէքլէմէքտէ տիրլէր: Պուլտան պիր գաշ հաֆթա մուգատտէմ, Ֆրանսըզ վարօրը մանէվրա իճրա իթմէք իլիւն Չանազալէ պօղա- զընտան չըգմըշ օլուպ, կէչէն կիւն եինէ Սթանպուլա ամտէթ իթմէք իլիւն պօղազտան իլէրի կիրմէյէ միւսատէ իսթէմիշ, վէ պու միւսատէ Սուլթանըն իրատէ- սի լիլէ վէրիլէմէկիւտէն՝ սէրայա իսթիլաւն ոլընտըզընտա, Սուլթա- նըն սէրքեթիլալի՝ Ֆրանսըզ սէ- ֆինէլէրի միւսատէ իտիլմէյէմէ- կիւն խարիճիլէ նազըրընա պէյան իթմիշ տիր: Նազըր՝ սէրայալան կէլէն պու ճէվապ իւզէրինէ՝ Ֆը- րանսըզ սէֆարէթիւնէ պէյաննա- մէսինի կէրի ալմազ թէքլիֆ իթ- միշ տիր: չու սէպէպլէ իքի հիւ- քիւմէթ պէյինիւտէ եէնի պիր կէ- կիւնիք զուհուրա կէլէմէկի վանն օլընլար:

— Ֆրանսըզ էլիլիսի Մ. Գոնս- թան էվլէլէրի կիւն Սթանպուլա միւթէվէտմիհէն Բարիստէն հարէ- քէթ իթմիշ տիր:

ՏԱԽԻԼԻՑԷ

Միս Սթոն նամ ամերիկալը մի սիօնար զըզ վէ անը աշըրան շա- գիլէրին Տուպիցա եազընլարըն տա պուլընտըզլարը թէպէյիւն օ- լընմըշ տիր:

Սօֆիատաքի ամերիկա գօնսուլ- սը կէչէն կիւն շաքիլէրէ խիթապ, պիր իւլթիլաթմօնէվիւտէն թահ- րիրաթ եազուպ, էկէր վատ օլը- նան 12,000 լիրայը գապուլ ի- տուպտէ Միս Սթոնը վէ ըէֆիգէ- սրնի թէպիւմ իթմէզլէր իսէ, մու- խապէրաթը գաթ՝ վէ զըզլարը քէնտի թալէհիլէրինէ իհալ իտէ- ըէր, չէքիւլուպ Սթանպուլա կիտէ- ճէկիւնի իսթար իթմիշ տիր: Գոն. ոլոսա ճէվապէն շաքիլէր 25,000 լիրայը թէմամէն ալմատըգտան սօնրա, գատընլարը սէրպէսթ պը- րազմայաճազլարըն գաթիէն պիւ- տիրմիշ տիրլէր: Գօնսուլոս պու- ըտտ ճէվապընը ալմասը իւզէրի- նէ, Սօֆիատան մուֆտաթաթլէ Սթանպուլա կիթմիշ տիր, Շու- հալտէ մէսէլէ շիմտիլիք էն կէր- կիւն պիր հալ քէսպ իթմիշ տիր:

ԵՌԻՆԱՆԻՍԹԱՆ

Աթինատա իսթիլալ տէվամ իթմէքտէ տիր: Թալէպէլէր սի- լահլանմըշ օլարապ Տարիլիֆինու- տան չըգմայօրլար: Էհալի խընճա խընճ հիւքիւմէթ գօնաղը Էօնիւնէ թօփլանուպ քէնչէրէլէրի վէ գա- թուլարը թաշլատը:

Էհալիի տաղըթմազ իլիւն պուլ վէի ասքէրիլէ իսթիլալ օլընտը ֆաթաթ օնլար ասքէր իւզէրինէ տախի սիլահ սըգտըրլար: ասքէր- լէրտէն վէ Էհալիտէն 25-30 քիլի էօլիւ վէ եարէլի տիւշմիշ տիր:

Վիւքէլա Բիլիսի Մ. Թէօտօքիս իսթիֆաւընը վէրտի իսէտէ գրալ Եօրկի գապուլ իթմէմիշ տիր: Ֆաթաթ Աթինա մէթրօքիլիին

վէ գապթիլէ նազըրընըն իսթիֆա- լարը գապուլ օլընմըշ տիր: Ժէնէ- լալ վասուս գօմանտան թալիս օ- լընարապ իսթիլալը թէսքիւն իլիւն, Էհալիլին քէնտի իւզէրինտէ օլան հիւսնի թէվէտմուհէնտան իսթիֆա- տէ իթմէկէ շալըրլար: Ֆաթաթ շիմտիլէ գատար մուլաֆազ օլ- մամըշ տիր: Թալէպէլէր «Աթի» վէ «Աքրօքիս» կազէթալարըն իտարէլանէլէրի իւզէրինէ եէնի- տէն հիւճու իթմէք վէ եազմազ նիլէթիւտէ օլտըզլարընտան, բէք չօգ ասքէր մէզքիւր իտարէլանէ- լէրի կիճէ կիւնտիւզ պէքլէլուպ, մուհաֆուզա իթմէքտէ տիր: Հիւ- քիւմէթ զայէթ սապըրլէ տալրա- նարապ Էհալիլի թաթլըլըլէ թէս քիւն իթմէյէ շալըրլար: Բալիքա- ըրալար իսէ հիւքիւմէթին հալիւ- տէն շըմարուպ, ֆէսատմը բար- թիլալարին թէշվիլիլէ ալէաթ օլմազտա տըրլար:

— Կիրիա գօմիսէրի Բրէնս Եօր- կի Էվրոքատան ալտէթիւտէն պէ- ըու, իքի հաֆթա գատար Աթի- նատա պուլընտըզընտան, էվլէլէրի կիւն կիրիտէ ալտէթ իթմէք ի- չիւն գրալ խանէտանը Բրէնսէ սթմասիօնա գատար ըէֆաթաթ իթ- տի, ֆաթաթ նիւմայիշիլէրտէն պիր քիմսէ գրալ ֆամիլիտանընա գարըն հարֆինտաղըզ վէ նիւմա- յիշ նէվիլիտէն հիշ պիր եօլըզըզ- տա պուլընմատը:

ՄԻԻԹԷՆԷՎԼԻՑԷ

Ալմանիատա պիրհանը մալիյէ հիւքմ իթմէքտէ օլուպ, բէք չօգ ֆաթարիգալար իլիլէրի թաթիլ իթ- միշ վէ չօզլարը ամէլէնի պիր զըսմընա եօլ վէրմիշ տիրլէր: Պու կիւն Պէրլինտէ 35000 ամէ- լէ իշիլ գալարապ իէվմիլէ իտա- լէտէն աճիլ սէր սէֆիլ պիր հալ- տէ տիրլէր:

— Սերպիա գրալիցասը Տրակա- նըն էօլտիւրիլմիշ վէ եախօտ քէն- տի քէնտիսինի էօլտիւրիլմիշ օլտը- ղընա տալիլ չըգմըշ օլան շա- յաթ ըհամէն թէքիլալ օլընտը- ղը կիպի, պու նալան մախսուս Վիլէնտա՝ Սերպիայը գարընըզ հալտէ կէօթէրմէք իլիւն՝ եա- բըլմըշ օլտըզընը պիտիլիլօրլար:

Ջափալը Տրակա, գրալիցա օլ- տըզընտան պէրու պիր գաշ տէ- ֆա էօլտիւ, տիրիլտի, տօղուրտը, տօղուրմատը վէ սաիրէ: Պու հա- լանլար զըսմանըզ վէ խոսուլմէթ էլալմի տիր:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Սօն թէլէկրաֆալարտան միշաթիլալաճ Սթանպուլ, 11 նոյ.

Անդրանիկին թահլը ըրիյաօէ- թիւտէ պուլընտէ Էրմէնի չէթէսի Մուշ սանճաղը տախիլիւտէ պիր մանաթըրտա պուլընտապ, աս քէրլէրտէն մուհասէրէ օլընմըշ տըր: Վանտաքի ըուս պօնսուլոսը

մէզքիւր մահէլէ գօշմուշ տըր:

— Քիւրտ Համիտիլէլէրին սի- լահլարը թօփլամազ իլիւն ըու- սիանըն թալէպ իթիլիլէ տալիլ չըգմըշ օլան շալաթ էսասըզ տըր: Բուսիա՝ եալընըզ քիւրտիւ- ըրն խրիթիլալարա գարըն վահ- շիլիլէր իթմէմէլէրիլի իտա տ իթ միշ տիր:

— Ֆրանսըզ էլիլիսի Մ. Գոնս- թան Սթանպուլա եէթիլտի:

Սթանպուլ, 12 նոյ.

Պիր մանաթըրտա ասքէրլէր- տէն մուհասէրէ օլընմըշ օլան էր- մէնի գօմիլթէ չէթէսինի ըէյիսի՝ Սիլվանիկին ասքէր գօրտօնը ա- լաօնտան պիր եօլ պուլուպ, գաշ- մըշ օլտըզը Մուշտանպիլտիլիլօրլար:

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԿԱՄ

ՄԻՄՈՒՆԶ ՀԱՅԿԱԿԱՆ

Այս երգարանի Բ. տպագրութիւնն է որ այսօր լոյս տեսաւ, աւելի ճոխա- ցած, բարեփոխուած եւ մաքուր թուղ թի վրայ տպուած: Հակառակ գնոյն աժանութեանը, կը պարուհակէ այն բոլոր հին եւ նոր ազգային երգերը որոնք ընտիր եղանակ ունին ու կեր- գուին հայ ժողովուրդի ամեն դասա- կարգէն

Գին 1 Ֆր.

Ստանալու համար բօստի ծախքը 10 սանդիւպ պէտք է սխառեղ շրջել իրաւունքի խորագրութեան վառնա: Կը ծախուի նաեւ Գահիրէի մէջ մեր գործակատար Տ. Կարապետ Երզնկաց- նանի խանութը, Ուստը (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանկի, Չիքսկօ Տ. Մ. Գարալիւսիլուրեան եւ Ընկ. ջով Պուրիլի Տ. Ղազար Պօղոսեանի վա- ճառատունը, Քէօստէնէ Տ. Ղ. Կըռ, Նիկեանի ջով:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԵՂԲԱՐԳ Ն. ՔԷՍԱՆԵԱՆ

Կաշակարարի, ամեն տեսակ կօ- շիկ եւ Ռոշաակաւ լաւտիկ-կա- յօլներ

Վառնա Ուլիցա Բրիտանիա Պուլ- կար ազգ. պանթալէն վերի կողմը Սոյն վաճառատուն 15 տարիներէ ի վեր Ռուսուքի մէջ իր ուղղամտու- թեամբ ու ապրանքներուն մաքրու- թեամբ ծանօթ լինելով, այս օրերս մասնաճիւղ մըն ալ Վառնայի մէջ հաստատած է, եւ կուգայ յայտարա- ըլ թէ քաղաքիս մէջ իր նոր ստա- նալիք յաճախորդները ըստ ամենայնի գոհ ընելու համար պիտի ջանայ կա- ըլիլ եղածին չափ զիւրամատչելի գի- ներով մաքուր տպագրութիւն տալ իրեն զիմուներուն:

Одговорникъ Н. Драгулевъ

Печатница «Взajemность», Варна